ՈՐՈՇՈՒՄ

Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 11.12.2020թ. կայացված ԱՖ383548, ԱՖ383549 որոշումներն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<< 29>> 12 2020թ. 7-13 - 16122

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե. Կարապետյանս վերանայելով քաղաքացի Նիկոլայ Մկրտչյանի ՄԴ/160779-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի Երզնկյան փողոցի 46/2 տան բնակիչ Նիկոլայ Մկրտչյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման գործով 11.12.2020թ. կայացված ԱՖ383548 և ԱՖ383549 որոշումները՝ նշելով իր անհամաձայնությունը որոշման հետ: Միաժամանակ հեռախոսակապի միջոցով հայտնել է,որ դիմումին ավելացնելու ոչինչ չունի, խնդրել է դիմումը քննել առանց իր մասնակցության և արդյունքների մասին տալ գրավոր պատասխան:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման գործով 11.12.2020թ. կայացված ԱՖ383548, ԱՖ383549 որոշումները ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ:

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> << օրենքի>> 24-րդ հոդվածի 2-րդ մասի <<դ>> կետի 1-ին և 2-րդ ենթակետի համաձայն ճանապարհատրանսպորտային պատահարին մասնակցություն ունենալու դեպքում՝

1) անմիջապես կանգնեցնել տրանսպորտային միջոցը, ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված կարգով միացնել վթարային լուսային ազդանշանը և չտեղաշարժել ինչպես տրանսպորտային միջոցը, այնպես էլ վթարի հետ կապված առարկաները (ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում հետվթարային անվտանգությունն ապահովելու նպատակով պետք է միացված լինեն նաև օգնության համար դեպքի վայրին անմիջապես մոտ կանգնեցված տրանսպորտային միջոցների վթարային լուսային ազդանշանները).

2) ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ տուժածներին առաջին բժշկական օգնություն ցույց տալու, «Շտապ բժշկական օգնություն» կամ մասնագիտացված այլ ծառայություն կանչելու համար, իսկ ծայրահեղ դեպքերում՝ համընթաց շարժվող կամ իր տրանսպորտային միջոցով տուժածներին մոտակա բուժհիմնարկ տեղափոխել, այնտեղ հայտնել իր ազգանունը, տրանսպորտային միջոցի գրանցման համարանիշը (ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ կամ վարորդական իրավունքի վկայական և տրանսպորտային միջոցի գրանցման վկայագիր), որից հետո վերադառնալ պատահարի վայր.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.6.-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող վարորդի կողմից ճանապարհատրանսպորտային պատահարին առնչություն ունեցող վարորդի՝ օրենքով սահմանված պարտականությունները չկատարելը, եթե դա չի պարունակում հանցագործության հատկանիշներ՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով:

<<Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին>> 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ պետք է մշտապես ունենա սեփականության իրավունքով իրեն պատկանող (ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով իրեն տրամադրված) և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցի համար կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագիր: **<u>Արգելվում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ավտոտրանսպորտային միջոցի վարումը, եթե դրա համար առկա չէ այն վարելու պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր:</u>**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ 02.12.2020թ ժամը 11:00-ից 12:00-ն ընկած ժամանակահատվածում Ն.Մկրտչյանի կողմից վարած <<VAZ-LADA>> մակնիշի 36QF862 հաշվառման համարանիշի և <<NISSAN>> մակնիշի 36XC216 հաշվառման համարինիշի ավտոմոբիլների միջև Երևան քաղաքի Սեբաստիա փողոցում «Երևան-Սիթի»-ի դիմաց տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար, որից հետո Ն.Մկրտչյանը չի կատարել օրենքով սահմանված պարտականությունները, այն է ինքնակամ հեռացել է վթարի վայրից և միաժամանակ ավտոմոբիլը վարել է առանց գործող ԱՊՊԱ պայմանագիր ունենալու: Ճանապարհային ոստիկանության 1-ին սպայական գումարտակի ՃՏՊ գործերով հետաքննության և վարչական վարույթի իրականացման բաժանմունքի ավագ տեսուչ ոստիկանության մայոր Գևորգ Դանիելյանը վարորդ Ն. Մկրտչյանի նկատմամբ <<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի>> 24-րդ հոդվածի 2-րդ մասի <<դ>> կետի 1-ին, 2-րդ ենթակետի և <<Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին>> 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն կազմել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.6-րդ հոդվածի 3-րդ մասի և 129.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն 11.12.2020թ. Ճանապարհային ոստիկանության 1-ին սպայական գումարտակի ՃՏՊ գործերով հետաքննության և վարչական վարույթի իրականացման

բաժանմունքի պետի տեղակալ ոստիկանության փոխգնդապետ Գ.Քոչարյանի կողմից կայացվել է ԱՖ383548 և ԱՖ383549 որոշումները:

Ճանապարհային ոստիկանության 1-ին սպայական գումարտակի ՃՏՊ գործերով հետաքննության և վարչական վարույթի իրականացման բաժանմունքի ավագ տեսուչ ոստիկանության մայոր Գ.Դանիելյանի կողմից տրված պարզաբանման համաձայն՝ տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարից հետո վարորդը իչ կատարել օրենքով սահմանված պարտականությունները ինքնակամ հեռացել է վթարի վայրից: Ճանապարհային ոստիկանության էլեկտրոնային ռեգիստրի միջոցով ստուգումից պարզվել է, որ վարորդը վթարին նախորդող պահին ավտոմոբիլը վարում է առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված տրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու: Վարորդի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ:Միաժամանակ ոստիկանության ծառայողները հայտնել են, որ իրենց և վարորդի միջև ծառայողական բնույթի խոսակցություններից բացի այլ խոսակցություններ չեն եղել:

Ճանապարհային ոստիկանության 1-ին սպայական գումարտակի ՃՏՊ գործերով հետաքննության և վարչական վարույթի իրականացման խմբի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր՝ Գ.Դանիելյանի գործողությունները կատարվել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի և ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրությանը համապատասխան, ուստի Ճանապարհային ոստիկանության 1-ին սպայական գումարտակի ՃՏՊ գործերով հետաքննության և վարչական վարույթի իրականացման բաժանմունքի պետի տեղակալ ոստիկանության փոխգնդապետ Գ.Քոչարյանի կողմից կայացված ԱՖ383548 և ԱՖ383549 որոշումները օրինական են:

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 126.6-րդ հոդվածի 3-րդ մասի և 129.2-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշները, իսկ ԱՖ383548 ԱՖ383549 որոշումներն օրինական է և հիմնավոր, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման գործով 11.12.2020թ. կայացված ԱՖ383548 և ԱՖ383549 որոշումները թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել
ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Նիկոլայ Մկրտչյանին և Ճանապարհային ոստիկանության
ՃՊԾ 1-ին սպայական գումարտակ:

Կատ.՝Գ.Հրաչյան
011- 544 -783

Ա.Գասպարյան